

**ՀՈԳՇ. Տ. ՏԱԾԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏՈՒՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԿԼԷՆՏԵՅԼԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ՍԱՏՈՒՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Յուլիս 25ի առաւօտեան ժամը 11:00ին Կլէնտէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց Առաջնորդը՝ Արիապատիւ Տ. Մանուէլ Եպս. Պաթագեան, իր կողքին ունենալով Գերապատիւ Հ. Գրիգոր Վրդ. Շահինեանը եւ Գերապատիւ Հ. Արմենակ Վրդ. Պետրոսեանը:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տրտրեանը կը ներկայացնէր Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանը, իր կողքին ունենալով Առաջնորդարանի Դիւանապետ՝ Արժ. Տ. Սիփան Աւագ Քինյ. Մխսեան:

Պատարագիչ Սրբազան Հայրը պաշտօնապէս Եկեղեցւոյ ժողովրդապետ նշանակեց Գերապատիւ Հ. Գրիգոր Վրդ. Շահինեանը եւ որպէս Օգնական ժողովրդապետ՝ Գերապատիւ Հ. Արմենակ Վրդ. Պետրոսեանը եւ խօսեցաւ անոնց կատարած հովուական եւ այլ պարտականութիւններու մասին: Անդրադարձաւ նաեւ Ծուխին նախկին ժողովրդապետներուն կատարած նուիրեալ ծառայութիւններուն: Շնորհաւորեց զիրենք եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց անոնց հոգեւոր առաքելութեան: Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր սիրալիր ողջոյնները փոխանցեց Պաթագեան Սրբազանին, ապա սրահին մէջ շնորհաւորեց նոր նշանակուած հոգեւորականները եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց անոնց: